«Կրթություն առանց սահմանի» ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները»

Ուսուցչուհի՝ Նարինե Մնացականյան

Ղեկավար՝

Ուսումնական հաստատություն՝ Մ. Նալբանդյանի անվան համար 33 հիմնական դպրոց, դասվար

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....6

1.1. Նախաայբբենական փուլի հասկացությունը, կազմակերպման նպատակները 6

1.2. Նախաայբբենական փուլի կազմակերպման և նպատակների արդյունավետության հոգեբանամանկավարժական հիմքերը 10

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԱԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 13

2.1. Նախաայբբենական փուլի կազմակեպման նպատակների իրականացման ուղիները 13

2.2. Նախաայբբենական փուլի արդյունավետ կազմակերպման հնարավոր վերջնարդյունքները 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

Մայրենիի մեթոդիկան ունի իր հիմնական բաժինները, որտեղ առանձին – առանձին քննարկվում են գրաճանաչության, ընթերցանության, քերականության ուսուցման, խոսքի զարգացման և մեթոդական աշխատանքների կազմակերպման հարցերը: Առաջնային կարևորության հարցերը, որոնք հիմնաքարային են սովորողի հետագա ուսումնական գործունեության կազմակերպման համար, ընկած են գրաճանաչության կազմակերպման գործընթացի հիմքում, որը բովանդակում է նախաայբբենական, այբբենական և հետայբբենական փուլերը:

Գրաճանաչության կազմակերպման գործընթացի բովանդակությանն ու մեթոդներին ներկայացվում են սովորողների տարիքային առանձնահատկություններով և հնարավորություններով պայմանավորված որոշակի պահանջներ: Դրանք մասնավորապես բխում են հոգեկան այն գործընթացներից, որոնք ուսուցման ժամանակ ակնառու դեր ունեն:

Նախաայբբենական փուլի արդյունավետ կազմակերպումը թույլ տալիս առաջին դասարանումմ սովորող աշակերտներին, նրանց ուսուցիչներին, ծնողներին բավականին արագ ներգրավվել ուսումնական գործընթացում, ինչպես նաև նպատակաուղղված է այդ գործընթացում հանդիպող դժվարությունները տարաբնույթ առաջադրանքների կատարման միջոցով հաղթահարելուն:

Անժխտելի է այն իրողությունը, որ ինչպես ցանկացած այլ գործընթացի, այնպես էլ ուսումնական գործընթացի բովանդակությունը կազմող ցանկացած գործունեության վերջնարդյունքը մեծապես պայմանավորված է այն նախապատրաստական աշխատանքով, որը նախորդում է դրան: Կարդալու և գրելու գործընթացները էականորեն բարդ են, դրանք դժվարությամբ են տրվում 6 տարեկան երեխային (Ընդհանուր կրթությունը սկսվում է վեց տարեկանից (որը լրանում է մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի վերջը:[1]), հաճախ դրանք թվում են անհաղթահարելի ինչպես երեխաներին, այդպես էլ ծնողներին: Ընդ որում խնդիրն առավել սուր է ներառական կրթության պայմաններում, երբ բացի այն, որ երեխաները դժվարանում են, լրացուցիչ դժվարություններ են առաջանում նաև ծնողների հետ փոխգործակցության համատեքստում:

[1] «Կրթության մասին» ՀՀ օրենքը (Ընդունված է Ազգային ժողովի կողմից 14 ապրիլի 1999 թ., փոփոխությունները և լրացումները առ 2023 թվականի փետրվարի 10) https://www.arlis.am/documentview.aspx?docid=174534 (Վերջին մուտքը՝ 18.09.2023, ժամը՝ 19:56)

Այս և այլ խնդիրների հնարավորինս կարգաբերումը ենթադրում է նախաայբբենական փուլում այնպիսի հիմքերի ներդրումը, որոնք կնպաստեն սովորողների մոտ կարդալու և գրելու կարողունակության ձևավորմանը և ոչ միայն, քանի որ այդ փուլը ենթադրում է նաև դպրոց ընդունվող երեխայի առանձնահատկությունների ուսումնասիրում, խոսքի, տեսողության, լսողության, շարժողական կարողությունների հետազոտում, երեխայի՝ դպրոցին նախապատրաստվածության մակարդակի որոշում (կարդալու, գրելու, հնչյունային-վերլուծական, բանավոր կապակցված խոսքի կարողությունների մակարդակ)[2]:

Տարատեսակ դիտարկումները, համապատասխան ուսումնասիրությունները, զրույցներն և հարցախույզները ցույց են տալիս, որ համընդհանուր ներառման պայմաններում տարրական դասարանների ուսուցիչները՝ դասվարները դժվարություններ են ունենում մայրենիի դասագործընթացում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքները կազմակերպելիս: Սակայն նրանց հանդեպ ուշադրության դրսևորումը չի կարող ուսումնական գործընթացից դուրս թողնել մնացյալ սովորողներին:

Նախաայբբենական փուլի կազմակերպման, դրա հիմքում դրվող նպատակների և իրականացման ուղիների ուսումնասիրության շրջանակներում մանկավարժական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունների մեկնաբանմամբ, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմամբ է պայմանավորված ուսումնասիրվող թեմայի գծով հետաքրքրությունը, ընտրությունը և այժմեականությունը:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակների և դրանց կենսագործման ուղիների դիտարկում՝ այդ և հետագա փուլերի արդյունավետության բարձրացման համատեքստում: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել նախաայբբենական փուլի էությունը, դրա կազմակերպման կարևորությունը, դերը,
- մեկնաբանել նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները,
- դիտարկել նախաայբբենական փուլի իրականացման ուղիները,

[2] Միքայելյան Ա.Վ., Սվաջյան Ա.Հ., Մայրենի 1: Աշխատանքային գիրք-տետր: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Ասողիկ, 2021.-41 էջ, էջ 3:

- ուսումնասիրել այն արդյունքները, որոնք կապահովվեն նախաայբբենական փուլի նպատակների արդյունավետ իրականացման դեպքում:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է նախաայբբենական փուլի արդյունավետ կազմակերպման, նպատակների ճշգրիտ սահմանման պայմաններում, իսկ առարկան՝ որոշակի իրադարձությունների դրսևորման դեպքում (մեր դեպքում նախաայբբենական փուլի իրականացման ուղիների ճիշտ ընտրության) ապահոված արդյունքները:

Հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն: Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են նախաայբբենական փուլի, դրա նպատակների վերաբերյալ մասնագիտական աղբյուրները,
- ուսումնասիրվել են նախաայբբենական փուլի կազմակերպմանը վերագրված նպատակների իրականացման ուղիները,
- առաջ են քաշվել այն հնարավոր արդյունքները, որոնց հնարավոր կլինի հասնել նշված գործընթացների արդյունավետ կազմակերպման արդյունքում:

Հետազոտության գերակա հարցը: Ո՞ր մոտեցումները կարելի է համարել հիմնաքարային նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակների արդյունավետ իրականացման գործում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 2 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 20 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Նախաայբբենական փուլի հասկացությունը, կազմակերպման նպատակները

Ուսումնական գործունեությունը, որը սկսած առաջին դասարանից դառնում է առաջատար, միայն այն ժամանակ կարող է նպաստել փոքրիկ դպրոցականի անձի զարգացմանը, արժեքների համակարգի ձևավորմանը, երբ առողջ են և (այդ տարիքի համար ընդունված սահմաններում) ավարտուն փուլում են գտնվում նրա հոգեկան գործընթացները (մասնավորապես՝ կամային վարքը, դիտակերպարանային մտածողությունը), և երեխան կարողանում է յուրացնել որոշակի սոցիալական նորմեր:

Գրաճանաչությունը սովորաբար կազմակերպվում է երեք շրջանով.

Ա. Նախաայբբենական շրջան

Բ. Այբբենական կամ գրուսուցման շրջան

Գ. Հետայբբենական շրջան:

Նախաայբբենական փուլը, թերևս, առավել բարդ հասկացություն է, քան ներկայացվում է մասնագիտական աղբյուրներում: Դասվարը չի կարող միայն մեթոդական հիմքերով և գիտելիքի պատշաճ մակարդակի առկայությամն հասնել նախաայբբենական փուլի արդյունավետ կենսագործման: Այն հնարավոր է միայն մի դեպքում, երբ մեկտեղված են դասվարի մանկավարժական, հոգեբանական, մասնագիտական, հաղորդակցական և այլն հմտությունները:

Նախաայբբենական փուլը լեզվի և գրականագիտական կրթության համակարգի *ներածություն* է: Դրա բովանդակությունը նպատակաուղղված է ուսումնական գործունեության համար մոտիվացիայի ձևավորմանը և բուն ընթերցանության գործընթացի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը: Այս փուլում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում յուրաքանչյուր սովորողի համար բանավոր խոսքի ձևերի զարգացման սկզբնական մակարդակի բացահայտմանը, հատկապես լսելու և խոսելու

համար: Կա ևս մեկ խնդիր՝ ծանոթանալ ուսումնական գործունեությանը, *վարժվել դպրոցի պահանջներին, պայմաններին, միջավայրին*[3]:

Հեղինակի տեսակետը հիմք ընդունելով՝ կարող ենք ամրագրել նախաայբբենական փուլի կազմակերպման առաջին նպատակը. *Աշակերտների ծանոթացում՝ դպրոցական միջավայրին և կարգուկանոնին,* որը ունի հետևյալ ենթանպատակները.

- Սովորեցնել ճիշտ նստելու, ուսուցչի և ընկերների հետ շփվելու ձևերը:
- Լսել ուսուցչի և ընկերների խոսքը, արձագանքել դրանց:
- Օգտվել գրքից ու գրենական պիտույքներից և սովորել դրանց խնամքով գործածելու կանոնները:
- Ցուցադրված մեծադիր այբուբենի վրա նշել ծանոթ տառերը (տպագիր և ձեռագիր):
- Անկաշկանդ դրսևորել գեղարվեստական ընդունակությունները (արտասանել, երգել, նվագել, պարել):

Նախաայբբենական փուլի կազմակերպման հաջորդ նպատակը դպրոց ընդունվող երեխայի առանձնահատկությունների ուսումնասիրումն է, մասնավորապես, խոսքի, տեսողության, լսողության, շարժողական կարողությունների գնահատման համատեքստում: Այս նպատակը թույլ է տալիս նաև սահմանել հաջորդ նպատակը, որպիսին է երեխայի՝ դպրոցին նախապատրաստվածության մակարդակի որոշումը, ինչը բովանդակում է կարդալու, գրելու, հնչյունային-վերլուծական, բանավոր կապակցված խոսքի կարողությունների մակարդակի դիտարկում:

Երեխաների մուտքը լեզվի աշխարհ սկսվում է բառին ծանոթանալուց, նրա իմաստից, հաղորդակցական տարբեր իրավիճակներում նրա անվանական գործառույթի ըմբռնմամբ, նրա բովանդակության (իմաստի) և ձևի տարբերակումով: Առաջին դասարանցիները սկզբնական պատկերացումներ են կազմում նախադասության մասին, զարգացնում հնչյունաբանական լսողությունը և տարբեր հնչյունային և վանկային կառուցվածքի բառերում հնչյունների հաջորդականությունը որոշելու կարողունակությունը: Նրանք սովորում են բառերի ձայնային վերլուծություն կատարել, բառերը բաժանել վանկերի, բառի մեջ գտնել վանկերը: Նախապատրաստական փուլում ձևավորվում են նախնական պատկերացումներ ձայնավորների և բաղաձայնների (կոշտ և փափուկ հնչյունների) մասին, ուսումնասիրվում են ձայնավոր հնչյունները և դրանք նշանակող տառերը: Գրելու դասերին երեխաները սովորում են տետրի դիրքի, գրչի և

[3] Программы для учреждений, обеспечивающих получение общего среднего образования с русским языком обучения с 11-летним сроком обучения. 1-4 классы. - Мн.: Национальный институт образования, 2012. - 240 с., с. 19.

դրանցից ճիշտ օգտվելու պահանջները, սովորում են նախ գրել տառերի տարրերը, այնուհետև տիրապետել տառերը գրելուն[4]:

Նախաայբբենական փուլում ուսումնասիրվում է նախադասությունը՝ խոսքի տրոհումը նախադասությունների, նախադասություն եզրույթի /տերմինի/ գործածությունը, նախադասության սկիզբը և վերջը խորհրդանշող նշանները, սովորողները ծանոթանում են նախադասությունը մեծատառով սկսելու և վերջակետով ավարտելու կարգին:

Նախաայբբենական փուլում ուսումնասիրվում է բառը և բառակապակցությունը, մասնավորապես, տրվում է նախնական հասկացողություն բառի մասին, նախադասությունը տրոհվում է բառերի, բառակապակցությունների, նախադասությունը համառոտվում կամ ընդարձակվում է ըստ որոշակի բառաքանակի:

Նախաայբբենական փուլում ուսումնասիրվում է վանկը, մասնավորապես, տրվում է հասկացողություն վանկի մասին, ներկայացվում է բառերի բաժանումը վանկերի, ձևավորվում է կարողունակություն որոշել վանկերի քանակը բառերի մեջ:

Դեռես մանկության տարիներին (մինչև ուսումնական գործունեության սկիզբը) երեխաները գործնականորեն տիրապետում են իրենց մայրենի լեզվի հնչյունային կառուցվածքին և հայերենի գրեթե բոլոր հնչյուններն արտասանում են մաքուր, անխառն: Սակայն սկսած գրաճանաչության նախաայբբենական շրջանից՝ պիտի համակարգված նպատակային աշխատանք տանել բառը վանկերի բաժանելու, բառի կազմում եղած հնչյունները լսելու, դրանց տեղն ու հաջորդականությունը որոշելու, առաջարկվող հնչյունով սկսվող, ավարտվող (բառամիջում) բառեր ասելու ուղղությամբ: Այս կարողությունների տիրապետումը ենթադրում է վերլուծելու, համադրելու, համեմատելու, դասդասելու ունակությունների առկայություն:

Ապա անցում է կատարվում հնչյուններին: Եթե երեխաները չեն կարողանամ լսել բառի հնչյունները, տարբերակել դրանք, նշանակում է նրանց հնչյունային լսողությունը բավարար չափով զարգացած չէ: Բնականաբար, այդ դեպքում կարդալու գործընթացում նրանք կդժվարանան: Այդ պատճառով էլ ողջ գրաճանաչության շրջանում մեծ տեղ է տրվում հնչյունային լսողության զարգացմանը:

Հնչյունների, տառերի և վանկերի ուսումնասիրմանը մեծ տեղ պետք է տրվի թե՛ առաջին, թե՛ երկրորդ դասարաններում, որովհետև դրանք ուղղագրության և ուղղախոսության ուսումնասիրման համար հիմք են ստեղծում: Այդ ուղղությամբ

[4] Довнар, Л.А. Обучение грамоте. Примерное календарно-тематическое планирование по учебному пособию А.К. Клышка на 2015 – 2016 уч. год: пособие для учителей учреждений общего среднего образования с русским языком обучения / Л.А. Довнар. – Минск: Национальный институт образования, АВЕРСЭВ, 2015. – 34 с., с. 9.

մասնավորապես մանրակրկիտ աշխատանք պետք է տանել լեզվական թերություններ ունեցող երեխաների հետ (արտասանելիս շփոթում են հնչյունները, գրելիս՝ տառերը): Այդ թերությունների շտկման համար հատուկ վարժություններ պիտի կազմակերպել երկաստիճան (զ-ս, ռ-ր, ժ-շ, ղ-խ, վ-ֆ) և եռաստիճան (բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ձ-ծ-ց, ջ-ճ-չ) բաղաձայնների շուրջ: Դրանք մասնավորապես պիտի վերաբերեն հնչյունային տարբերություններ ունեցող բառերին (հակադրման վարժություններ)՝ հնչման տարբերությունները զգալ տալու և ճիշտ գրել-կարդալ սովորեցնելու համար (մազ-մաս, զտել-ստել, սուր-զուր, տող-թող-դող և այլն)[5]:

Հնչյունի և տառի մասին տրվող գաղափարը, որքան էլ պարզ և մատչելի, պիտի լինի գիտական: Երեխաները պետք է իմանան, որ արտասանվող կամ ունկնդրվող խոսքը կազմված է հնչյուններից, որոնք բաժանվում են երկու խմբի՝ ձայնավոր և բաղաձայն: Ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին երեխաների ունեցած գիտելիքներն ու կարողությունները խորացնելու, հնչյունային լսողությունը զարգացնելու նպատակով կարելի է գրաճանաչության ավարտից՝ հետայբբենական փուլից հետո երեխաներին սովորեցնել տառանունները (այբ, բեն, գիմ,...), որը կնպաստի այբուբենն անգիր անելուն և մտապահելուն: Այնուհետև անհրաժեշտ է ընդարձակել հնչյունի և տառի ճանաչողության սահմանները՝ բացահայտելով նրանց նոր հատկանիշները:

Հնչյուններն ըստ ձայնավոր և բաղաձայն տեսակների դասակարգելիս հիմք են ընդունվում նրանց մի քանի էական առանձնահատկություններ.

- արտասանության եղանակը (ձայնավոր հնչյուններն արտասանելիս օդն ազատ անցնում է բերանի խոռոչով, բաղաձայններն արտասանելու ժամանակ օդը հանդիպում է արգելքի),
- հնչման բնույթը (ձայնավորները կազմված են միայն ձայնից, իսկ բաղաձայնները՝ աղմուկից ու ձայնից կամ միայն աղմուկից),
- վանկ կազմելու հնարավորությունը (ձայնավորը վանկ է կազմում, իսկ բաղաձայնը՝ ոչ):

Այս պարզ եզրակացություններին երեխաներն իրենք պիտի հանգեն արտասանելով և իրար հետ համեմատելով հնչյունները: Այսպիսի մոտեցումն ապահովում է ոչ միայն լեզվական այս խնդրի լուծումը, այլև համեմատությունների, ընդհանրացումների, դիտարկվող երևույթը տարբեր կողմերից ուսումնասիրելու գործողությունների ժամանակ

[5] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ» հրատ., 2018թ., էջ 61.

զարգանում են երեխաների մտավոր կարողությունները, լեզվամտածողությունն ու տրամաբանությունը:

Հայոց այբուբենը հնչյունային է, քանի որ յուրաքանչյուր հնչյուն ունի իր տառը: Դրանում երեխաները համոզվել են դեռևս գրաճանաչության շրջանում, երբ ուսումնասիրվող յուրաքանչյուր հնչյունի համար տառադարանից հանել են նրա տառն ու բառերի մեջ օգտագործել: Դեռես այս շրջանից երեխաները գիտեն, որ բառը կարող է ունենալ 5 հնչյուն, բայց 4 տառ (օրինակ՝ ելակ, որս և նման այլ բառերում): Ուսուցման և հետայբբենական շրջանում նրանք պիտի սահմանեն, որ հնչյունն արտասանում ենք ու լսում, իսկ տառը գրում ենք ու կարդում, տառը հնչյունի պատկերն է՝ պայմանական նշանը: Երեխաները պիտի գործնականորեն տարբերեն հայերենի 6 ձայնավոր հնչյունները (ա, է, ի, ու, ը, օ) և դրանց 8 տառերը (ա, ու, է(ե),ի, ը,օ(ո)):

1.2. Նախաայբբենական փուլի կազմակերպման և նպատակների արդյունավետության հոգեբանամանկավարժական հիմքերը

Յուրաքանչյուր ուսուցիչ, մանկավարժ իր գործունեության ընթացում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական

փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում *կամածինության* ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է *խաղալու պահանջմունքը*: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև *շարժվելու պահանջմունքը*, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր *է նոր տպավորություններ ստանալու պահանջը*, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը[6]:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է ուսուցչի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցիչը: Այդ պատճառով, ուսուցիչը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները[7]:

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի *զգացմունքների* բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացմունքերը այժմ առաջանում են որ միայն հաճելի խաղ խաղալուց և հաճույք ստանալուց, այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելուց, դժվարություններ

[6] Архиреева Т.В. Динамика учебной мотивации детей младшего школьного возраста //Культурно-историческая психология. 2015. Т. 11. № 2. –С. 38–47.
[7] Дубровина И.В. Возрастная и педагогическая психология: Хрестоматия: уч. пособие для студентов средн. пед. учебн. завед. Москва: Академия, 2009. –320 с., с. 79.

հաղթահարելուց, մրցակցությունից: Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր սոցիալական դերերի, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները:

Կրտսեր դպրոցական տարիքի հիմնական նորագոյացություններից է գործողությունների կամածինության զարգացումը, որը բավական երկարատև գործընթաց է և սկսվում է ուսումնական գործունեության ընթացքում: Ձևավորվում է *կամքը,* որը անընդհատ գործընթաց է, քանի որ ուսումնական գործունեության ողջ ընթացքում երեխայի առջև դրվում են նորանոր նպատակներ: Սկզբնական շրջանում կամքի ձևավորումը մեծապես պայմանավորված է արտաքին պայմաններով՝ պահանջներով, ցուցումներով, օրինակներով, սակայն զարգացման ընթացքում երեխան սկսում է առաջնորդվելով սեփական պահանջներով, ցանկություններով, ձգտումներով: Կարևորագույն բնութագրերից է ինքնուրույնությունը, որին դրդում են մեծահասակները:

Իմացական ոլորտի զարգացում: Ուսումնական գործունեության համար կարևոր իմացական գործընթացներից է *հիշողությունը*: Աշակերտին անհրաժեշտ է մտապահել մեծ քանակությամբ ինֆորմացիա և վերարտադրել այն: Չտիրապետելով հատուկ հմտությունների, երեխան հիշում է մեխանիկորեն, սակայն մեծ քանակի նյութի մտապահման դեպքում դա հետզհետե դժվարանում է: Ուսուցիչը օգնում է երեխային կիրառել մտապահման որոշակի հմտություններ՝ իմաստավորված մտապահում /իմաստային տարրերի բաժանում, իմաստային խմբավորում, համեմատություն և այլ/ և վերարտադրման հնարներ: Երեխան սկզբնական փուլում դժվարանում է մտապահվող նյութի մեջ իմաստային տարրեր առանձնացնել, ինչը անհրաժեշտ է հմտացնել սկսած տարբեր նկարների և փոքր տեքստերի մտապահման գործընթացից[8]:

Այս տարիքում առաջնային պլան է մղվում *մտածողության* զարգացումը: Այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն: Առաջին տարիներին այն դեռևս պատկերավոր բնույթ է կրում, սակայն ուսումնական գործունեությունը ստիմուլացնում է վերացական մտածողության զարգացումը, երբ հստակ արտաքին առարկաների հետ գործ ունենալուց երեխան անցում է մտավոր պլանում գործողությունների կատարմանը: Կարևոր դեր են խաղում գիտական հասկացությունների ձևավորումը, որն ընթանում է ֆունկցիոնալ հատկանիշների առանձնացումից մինչև էական հատկանիշների առանձնացումը:

Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի *խոսքը*: Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ

[8] Лысина М.И. Развитие познавательной активности детей в ходе общения со взрослыми и сверстниками // Вопросы психологии. 1982, №4, с. 18.

խոսքային միջավայր, ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ, ձևավորելով բավարար բառապաշար, ձևավորելով գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջմունք և այլ[9]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝ իմացական ոլորտի զարգացում, աֆեկտիվ պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում, երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում:

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԱԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Նախաայբբենական փուլի կազմակեպման նպատակների իրականացման ուղիները

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակների իրականացումը չեն ենթադրում միայն դասվարի ներգրավվածություն: Մասնավորապես, ներառական կրթության ներգրավման համատեքստում սրվել է դասվար-ծնող սերտ համագործակցության անհրաժեշտությունը: Սա հիմք ընդունելով հավաստենք, որ անկախ նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակի բովանդակությունից որպես իրականացման ընդհանրական ուղի հանդես է գալիս դասվար-սովորող-ծնող կապը: Հաճախ ծնողները, որոնց երեխաները չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, տեղեկացված չեն ներառական կրթության խնդիրներին և պետք է նրանց հետ տանել համալիր աշխատանք, որպեսզի վերջիններս էլ տանը կարողանան զրույցի կամ այլ մեթոդներով իրենց երեխաներին համապատասխան մակարդակով տեղեկացնել իրենց դասընկերների առանձնահատկությունների մասին: Քիչ չեն դեպքերը, երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներն իրենք պատշաճ կերպով տեղեկացված չեն և կարիք կա այս համատեքստում որոշակի գործընթացներ նախաձեռնել ծնողական կրթության գոնե բավարար մակարդակ ապահովելու համար:

Մեր կարծիքով այդպիսի ուղիները բազմաթիվ են, իսկ դրա կարևորությունն ընդգծվել է պետական մակարդակով, մասնավորապես, «մեծահասակների կրթություն է համարվում հանրակրթության տարիքն անցած անձանց՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ, ինչպես նաև մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվող

[9] Немов, Р. С. Психология : учебник для бакалавров / Р. С. Немов. —. М. : Издательство Юрайт, ИД Юрайт, 2014. — 639 с., с. 102.

կրթությունը, որը քաղաքացիների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, տեխնիկական միջոցների, կենսագործունեության միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական ծառայությունների միջոցով ընթացող կրթական գործընթացը»[10]:

Ուսումնասիրվող համատեքստում ծնողական կրթության կազմակերպման ավանդական են համարվում ծնողական կրթության կազմակերպման այն ձևերը, որոնք ընդհանուր են բոլոր ուսումնական հաստատությունների համար և կիրառվում են տարիներ շարունակ: Դրանց թվին են դասվում ծնողական ժողովները, մանկավարժական զրույցները ծնողների հետ, համատեղ միջոցառումների կազմակերպումը, անհատական և խմբային խորհրդատվությունները և այլն[11]:

Ուսումնասիրվող համատեքստում ծնողական կրթության կազմակերպման ոչ ավանդական ձևերի թվին են դասվում քննարկումները, սեմինարները, «կլոր սեղանները», թրեյնինգները և այլն[12]:

Տարածվածությամբ, թերևս, աչքի են ընկնում ավանդական ձևերը: Անդրադառնանք դրանցից մի քանիսին: Ներկայացնենք դպրոցի և ուսուցչի կողմից ծնողական կրթության կազմակերպման ձևերին:

Ծնողական ժողովներ. Ծնողական ժողովը հանրակրթական ուսումնական հաստատություններում եղել և մնում է մանկավարժների՝ ծնողների հետ աշխատելու և համագործակցելու ամենատարածված ձևը: Առաջին հայացքից թվում է, թե նոր ժամանակները համագործակցության նոր եզրեր և եղանակներ պետք է առաջարկեն: Ամենևին էլ այդպես չէ: Ծնողական ժողովներն իրենց ավանդական և ոչ ավանդական ձևերով հանդիսանում են այդ համագործակցութան անբաժանելի մասը և մանկավարժի՝ ծնողի հետ աշխատելու առավել արդյունավետ ձևը՝ հատկապես երեխայի դաստիարակության ու զարգացման նախնական փուլում:

Դպրոցական համաժողովներ. Կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են բոլոր դասարաններում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Օրինակ, դեռ նախաայբբենական փուլում ծնողների մոտ անհանգստություն կա առ այն, թե ինչպես է կազմակերպվելու կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող և չունեցող երեխաների համատեղ ուսուցումը,

[10] ՀՀ կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի նիստի N 53 արձանագրային որոշման հավելված
[11] Цацыбин, С. А. Взаимодействие школы и семьи / СТР. А. Цацыбин. – Волгоград : Учитель, 2015., 105 с., стр. 19
[12] Взаимодействие семьи и школы: теория и практика [Электронный ресурс] : электрон. сб. материалов Междунар. науч.-практ. семинара, Брест, 28 апр. 2021 г. / Брест. обл. ин-т развития образования ; редкол.: Г. В. Лагонда, Е. И. Медведская ; под общ. ред. И. Г. Матыциной. – Брест : БрГУ, 2021., стр.33

իհարկե, մտահոգվելով կրթական գործընթացի արդյունավետության, որոշ դեպքերում էլ անվտանգության հարցերով: Այսպիսի հարցերը քննարկվում են դպրոցական համաժողովների ժամանակ: Դպրոցական համաժողովները այդօրինակ հարցերի շուրջ ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դպրոցական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողներին բացատրվում է, որ առանց համատեղ աշխատանքի հնարավոր չէ հասնել երկու խումբ երեխաների ուսումնական գործունեության արդյունավետության:

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակների իրականացման ուղիներից մեկը առանձին այցերն են՝ ծնողը ուսուցչին, խիստ անհրաժեշտության դեպքում *ուսուցիչների այցելությունը ծնողներին.* Այսօրինակ այցելությունը սովորաբար կրում է «փրկարարական» բնույթ, քանի որ ուսուցիչն այցելում է աշակերտի ծնողներին այն դեպքում, երբ արդեն առկա են և արմատավորվել են բավականաչափ խնդիրներ: Սա կարող է դրսևորվել նախաայբբենական փուլի կազմակերպման առաջին նպատակի կենսագործման ժամանակ, երբ աշակերտները ծանոթանում և հարմարվում են դպրոցական միջավայրին և կարգուկանոնին:

Սույն նպատակի արդյունավետ կենսագործում ապահովելու համար դասվարը կարող է առանձին զրույցներ ունենալ ծնողների հետ, ծանոթանալ երեխաների վարքային առանձնահատկություններին, դիտարկել դրանք շրջապատի հետ հաղորդակցման ընթացքում, և որպեսզի հետագա աշխատանքային ընթացքն առավել դյուրին լինի, դասվարը կարող է կազմել աղյուսակներ, որտեղ կընդգրկի սովորողների ցայտուն վարքային առանձնահատկությունները:

Որպես նախաայբբենական փուլի կազմակերպման հաջորդ նպատակ սահմանել ենք դպրոց ընդունվող երեխայի առանձնահատկությունների ուսումնասիրումը, իսկ որպես հաջորդ նպատակ՝ երեխայի՝ դպրոցին նախապատրաստվածության մակարդակի որոշումը: Սրանց հասնելու համար, կարծում ենք, դասվարը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները.

- երեխաների հոգեբանական, ֆիզիկական և գործնական նախապատրաստոմն ուսումնական գործունեությանը,
- ուսումնական գործունեության հարմարեցում՝ վեցամյա երեխաների վարքային դրսևորումներին,
- երեխայի զարգացման ընթացքին հետևելու աշխատանքների կազմակերպում՝ որպես հիմք ընդունելով ելակետային մակարդակը:

Նախաայբբենական փուլում նախադասությանը ծանոթացնելու նպատակի կենսագործման համար սահմանել ենք հետևյալ հնարավոր նպատակները՝

- աշխատանքային տետրերում կատարել գունավորելու և կետագծերով աշխատելու վարժություններ,
- նկարագրել որևէ իրադրություն (բնակարանի ճաշասենյակ, խոհանոց, դասարան, խաղահրապարակ) և առանձնացնել նախադասությունները, ապա՝ դրանց բաղկացուցիչ մասերը (ծափերով, թմբուկի հարվածներով) և հաշվել,
- կիրառել խաղային մեթոդ. Խաղ՝ «Կենդանի մոդելներ»՝ երեխաների միջոցով նախադասության «կառուցում», «բառերի» տեղափոխություն, համադրում նոր «բառերով» և «ընթերցում»:

Բառի կամ բառակապակցության ուսումնասիրության դեպքում իրականացվող գործողություններն են.

- նշել առարկայի և դրան համապատասխան բառի տարբերությունները (օրինակ, գնդակը կարելի է նետել, հարվածել, դնել ինչ-որ տեղ, իսկ բառը՝ լսել, գրել, կարդալ),
- թվարկել իմաստային տարբեր խմբերի բառեր (կենդանիներ, ծաղիկներ, մրգեր, խաղալիքներ, գունանուններ) և կազմել բառակապակցություններ,
- աշխատանքային տետրերում նշել առարկայական տարբեր պատկերների չափը, գույնը, տեղադրումը,
- կիրառել խաղային մեթոդ. խաղեր՝ առարկայական նկարներով:

Վանկի ուսումնասիրության դեպքում իրականացվող գործողություններն են.

- անվանել առարկայական նկարները և ուսուցչի օգնությամբ այդ բառերը բաժանել մասերի՝ վանկերի (ծափերով, թմբուկի հարվածներով, թղթի վրա գծեր նշելով…),
- հաշվել վանկերի քանակը՝ ծափերի, հարվածների միջոցով,
- ցուցադրված նկարներում առանձնացնել և թվել սկզբում մեկ, ապա 2-3 վանկից կազմված բառեր,
- կազմել բառերի գծապատկերներ՝ վանկերի տարբեր քանակությամբ:

Հնչյունի և բառի ուսումնասիրության դեպքում իրականացվող գործողություններն են.

- անվանել առաջադրված առարկայական նկարների միավանկ բառերը և կազմել հնչյունային գծապատկերներ՝ համեմատելով վանդակների քանակը,
- վարժություններ՝ միևնույն հնչյունը տարբեր դիրքերում գործածելու վերաբերյալ,
- տրված հնչյունային գծապատկերներին համապատասխան բառեր թվարկել,

- հնչյունները դասակարգել խմբերի՝ հաշվի առնելով դրանց արտասանական տարբերությունները,

- հնչյունական գծապատկերներում ներկել ձայնավորին համապատասխանող վանդակը՝ մյուսներից առանձնացնելու նպատակով,

- լուծել ամրակայող վարժություններ՝ անցած լեզվական նյութի շուրջ:

2.2. Նախաայբբենական փուլի արդյունավետ կազմակերպման հնարավոր վերջնարդյունքները

Նախաայբբենական փուլի արդյունավետ կազմակերպման հնարավոր վերջնարդյունքները սահմանվում են համապատասխան առարկայական չափորոշիչներով: Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ և «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը սահմանում է 1-ին դասարանցիների մոտ ինքնության ձևավորումը վերաբերմունքի և վարքագծի, արժևորման ձևով: Վերաբերմունքի և վարքագծի ձևավորումը ենթադրում է հոգատարության, սկզբունքայնության, ստեղծարարության, համարձակության, հաղորդակցության կարողունակության, ինքնակազմակերպման առկայություն: Արժորման հնարավոր կլինի հասնել, երբ սովորողը գնահատի իր անձը, սիրի իր ընտանիքը, ընկերներին, հայրենիքը: Գնահատի գիրքը, կարևորի ընթերցանությունը որպես գործունեության մշտական ձև: Սրանք կապահովվեն նախաայբբենական փուլի 1-ին նպատակի կենսագործմամբ:[13]

Հաղորդակցման ձևավորումը ենթադրում է բանավոր, գրավոր և ոչ խոսքային հաղորդակցման ձևավորումը: Դրանք ապահովված կհամարվեն, եթե սովորողը.

1. Լսի, հասկանա իրեն ուղղված խոսքը, պատասխանի հարցերին:

2. Պատասխանի տեքստի ընդհանուր բովանդակության վերաբերյալ հարցերին:

3. Հարցերի օգնությամբ պատմի ապրածը, դիտածը, խոսի իր ցանկությունների մասին:

4. Անվանի առարկաներ, երևույթներ՝ դրանց վերագրելով 1 – 2 հատկանիշ:

5. Արտասանի (արտահայտիչ կարդա) մանկական բանաստեղծություններ,

[13] Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ և «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 44-Ն հրամանը. 30 մարտի 2023 թ. https://www.arlis.am/documentview.aspx?docID=176068 (Վերջին մուտքը՝ 19.09.2023, ժամը՝ 11:09)

6. Տարբերակի հայերենի տպագիր և ձեռագիր տառերը, ճիշտ գրի ձեռագիր մեծատառերն ու փոքրատառերը:

7. Արտագրի մի քանի նախադասություններից կազմված տեքստեր ձեռագիր և տպագիր օրինակներից:

8. Իր հույզերը արտահայտի ժեստերի և դիմախաղի միջոցով:

9. Նկարի լսածի, դիտածի վերաբերյալ իր հույզերն ու զգացումները:

10. Մտքերն ու զգացումներն արտահայտի դիմախաղի, ժեստերի, մարմնի միջոցով՝ մասնակցելով դերային և թեմատիկ խաղերի:

Սրանք կապահովվեն նախաայբբենական փուլի առաջին նպատակից մինչև վերջինի՝ հնչյուն և բառի ուսումնասիրման ողջ ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով՝ նշենք, որ գրաճանաչության շրջանի կարևորագույն խնդիրը երեխաներին հասկանալով, սահուն, արտահայտիչ և գիտակցաբար կարդալ, գրագետ և վայելուչ գրել սովորեցնելն է, ինչպես նաև այդ տարիքի երեխաների ունակություններին համապատասխան բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորումը:

Գրաճանաչության ուսուցումը կազմակերպելիս պիտի հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, հաջողության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները՝ դասի ժամանակ կարևոր դեր տալով ինչպես դիտակտիկական այնպես էլ շարժուն խաղերին:

Պայմանավորված յուրաքանչյուր երկրի կրթական համակարգի առանձնահատկություններով և հայեցի կրթության իրականացման շահեկան դիրքորոշումներով, ինչպես նաև ուսումնական գորշունեությունն սկսելու տարիքով ՝ գրաճանաչության նախաայբբենական շրջանին տրամադրվում է տարբեր ժամանակահատված, որի ժամանակ փուլ առ փուլ իրականացվում են վերը նշված խնդիրները:

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակների և դրանց կենսագործման ուղիների տեսական և կիրառական ասպեկտները մենք տեսնում ենք, որ նախաայբբենական փուլն ընկած է հետագա ուսումնական գործունեության արդյունավետ կազմակերպման հիմքում: Այս փուլում բավականին ցայտուն կերպով դրսևորվում են

դասվարի՝ որպես մանկավարժ-հոգեբանի հմտությունները: Դասվարը՝ սովորողներին ծանոթացնելով դպրոցական միջավայրին և կարգուկանոնին, անպայմանորեն ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվում է երեխայի անձնային առանձնահատկություններով պայմանավորված կամ ընտանեկան դաստիարակությունից բխող վարքային առանձնահատկություններին: Նախաայբբենական փուլի կազմակերպման, թերևս, առաջնային նպատակ համարել ենք դասվարի կողմից այնպիսի մոտեցման դրսևորումը, որը կբովանդակի դասվարի դիտարկումները երեխայի տարիքային՝ ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունների, երեխայի պատրաստվածության, ստացած դաստիարակության, ծնողավարման և այլնի վերաբերյալ: Բնականաբար, այս դեպքում չկա համընդհանուր, մեկ դասարանի համար ընդունելի ալգորիթմ: Երեխաները տարբեր են և միակ ընդհանրական բանն այն է, որ դասվարը պետք է համակողմանի դիտարկում անցկացնի: Իրականացման ուղին, սակայն, միայն դիտարկումը չէ, այլև ակտիվ համագործակցությունը ծնողների հետ: Ուսումնական գործընթացի յուրաքանչյուր փուլում ծնողական կարիքների, պահանջների և սպասելիքների գնահատումը բխում է ծնող-երեխա-դպրոց փոխգործակցության շղթայի անընդհատության ապահովման անհրաժեշտությունից: Բացի այդ այն դեպքում, երբ ծնողական կարիքները հստակ գնահատված են և դրանց գծով տարված է համապատասխան աշխատանք, բարձրանում է ծնողների ներգրավվածությունը, ինչն, անպայմանորեն հանգեցնում է երեխայի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Այս ուսումնասիրությունների հիմքով էլ ձևավորել ենք նախաայբբենական փուլի կազմակերպման հաջորդ նպատակը՝ հասնել հոգեկան բոլոր գործընթացների՝ մտածողության, հիշողության, ուշադրության, խոսքի զարգացմանը, մանր շարժունակության զարգացածության անհրաժեշտ մակարդակի ապահովմանը, տարածության մեջ կողմնորոշվելու սովորողների կարողունակության զարգացմանը, վերլուծահամադրական կարողունակության զարգացմանը: Այս ամենի ապահովման ուղին դասվարի կողմից այնպիսի առաջադրանքների կազմումն է կամ գրքային առաջադրանքների լուծման այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք սովորողին կմիտեն որոշակի ակտիվ գործողություններ կատարելուն: Անկախ այն հանգամանքից, թե դասվարն է օրինակներ ներկայացնում կամ օգտվում է դասագրքային նյութից, դրանք պետք է լիարժեքորեն համապատասխանեն առարկայական ծրագրի և կրթական չափորոշչի պահանջներին:

Իհարկե, աշխատանքում առաջ բերված նպատակներն այսքանով չեն սահմանափակվում: Սակայն բոլորի հիմքում դրել ենք այն գաղափարախոսությունը, որ

դասվարին այս պատասխանատու ընթացքում չի կարելի թողնել մենակ: Վերջինս կարիք ունի ծնողական համայնքի կողմից աջակցության, ինչի հիմքում պետք է ընկած լինի փոխըմբռնումը և փոխհասկացվածությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մասնագիտական գրականություն

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ» հրատ., 2018թ., 344 էջ
2. Միքայելյան Ա.Վ., Սվաջյան Ա.Հ., Մայրենի 1: Աշխատանքային գիրք-տետր: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Ասողիկ, 2021.-41 էջ
3. Архиреева Т.В. Динамика учебной мотивации детей младшего школьного возраста //Культурно-историческая психология. 2015. Т. 11. № 2. –С. 38–47.
4. Взаимодействие семьи и школы: теория и практика [Электронный ресурс] : электрон. сб. материалов Междунар. науч.-практ. семинара, Брест, 28 апр. 2021 г. / Брест. обл. ин-т развития образования ; редкол.: Г. В. Лагонда, Е. И. Медведская ; под общ. ред. И. Г. Матыциной. – Брест : БрГУ, 2021., стр.33
5. Дубровина И.В. Возрастная и педагогическая психология: Хрестоматия: уч. пособие для студентов средн. пед. учебн. завед. Москва: Академия, 2009. –320 с.
6. Довнар, Л.А. Обучение грамоте. Примерное календарно-тематическое планирование по учебному пособию А.К. Клышка на 2015 – 2016 уч. год: пособие для учителей учреждений общего среднего образования с русским языком обучения / Л.А. Довнар. – Минск: Национальный институт образования, АВЕРСЭВ, 2015. – 34 с.
7. Лысина М.И. Развитие познавательной активности детей в ходе общения со взрослыми и сверстниками // Вопросы психологии. 1982, №4, с. 18.
8. Немов, Р. С. Психология : учебник для бакалавров / Р. С. Немов. —. М. : Издательство Юрайт, ИД Юрайт, 2014. — 639 с.

9. Программы для учреждений, обеспечивающих получение общего среднего образования с русским языком обучения с 11-летним сроком обучения. 1-4 классы. - Мн.: Национальный институт образования, 2012. - 240 с.
10. Цацыбин, С. А. Взаимодействие школы и семьи / СТР. А. Цацыбин. – Волгоград : Учитель, 2015., 105 с.

Համացանցային աղբյուրներ

11. «Կրթության մասին» ՀՀ օրենքը (Ընդունված է Ազգային ժողովի կողմից 14 ապրիլի 1999 թ., փոփոխությունները և լրացումները առ 2023 թվականի փետրվարի 10)
12. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ և «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 44-Ն հրամանը. 30 մարտի 2023 թ.
13. ՀՀ կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի նիստի N 53 արձանագրային որոշման հավելված